Քաղաքացիական կրթության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք առաջադրանքների հրահանգներին, ճիշտ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև պատասխանեք հարցերին:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 5 ժամ

Մաղթում ենք հաջողություն:

Հրահանգ

- **Առաջադրանք՝ ընտրովի պատասխաններով (№1-13, 21.1, 25.1-25.3)**

Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից ճիշտ է միայն մեկը: Պատասխանների թերթիկի վրա, ճիշտ պատասխանի համապատասխան վանդակում, դրեք **X** նշանը: Եթե ցանկանում եք ուղղել նշված պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք **X** նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը: Ուղղած պատասխանը կրկին անգամ հնարավոր չէ ընտրել: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

- **Հաջորդականության սահմանում (№14)**

Առաջադրանքում տրված թվարկացանկը դասավորեք նշված սկզբունքի համաձայն: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված վանդակներում: Ի նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն ընտրված պատասխանի համապատասխան թվանշանը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

- **Համապաատասխանության որոշում (№15-17)**

Առաջադրանքում երկու սյունակով տրված է տարբեր տեսակի թվարկացանկ: Որոշեք համապատասխանությունը այս երկու սյունակում ներկայացված տեղեկատվության միջև: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով:

- **Սխալի ուղղում (№18)**

Առաջադրանքում տրված է տեքստ, որտեղ թույլ են տրված փաստացի սխալներ (տարեթիվ, տերմին, անուն և այլն)։ Գտեք և ուղղեք դրանք։ Գտած սխալը և դրա ուղղած տարբերակը գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում (սխալը՝ I սյունակում, իսկ ուղղած տարբերակը՝ II սյունակում)։ Ի նկատի ունեցեք, յուրաքանչյուր գտած սխալ, իր ուղղված տարբերակի հետ միասին, գնահատվում է 1 միավոր։ Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով։

- **Սխալի ուղղում (№19)**

Առաջադրանքում տրված է մեկ թեմայի հետ կապված երկու տեքստ։ Երկու տեքստն էլ պարունակում են փաստացի սխալներ։ Ձեր խնդիրն է վերլուծել տեքստերը, հայտնաբերել սխալները, և գնահատել տեքստերը նախապես տրված սխեմայով սահմանված չափորոշիչներով։ Գնահատումը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում։ Միավորների առավելագույն քանակը նշված է առաջադրանքի երկայնքով։

- **Առաջադրանք՝ բաց վերջավորությամբ (№20, 21.2, 21.3, 22, 23, 24, 25.4-25.7)**

Առաջադրանքում տրված է հարց, որին կցված չեն ենթադրական պատասխաններ։ Ուշադրությամբ ընթերցեք առաջադրանքի պայմանը և հարցը։ Պատասխանը պետք է լինի հարցին համարժեք և կոնկրետ։ Պատասխանը գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում։ Միավորների առավելագույն քանակը նշված է յուրաքանչյուր առաջադրանքի երկայնքով։

1. **Ինչպե՞ս է կոչվում անհատների խումբը, որը միավորված է հասարակության մեջ տիրող ապրելակերպից տարբերվող հետաքրքրությունների և արժեքների շուրջ:**

ա. Ծխական համայնք

բ. Սոցիում

գ. Կոլեկտիվ

դ. Սուբմշակույթ

2. Թվարկած փոլիսոփաներից որի՞ անունը *<u>կապված չէ</u>* հասարակական դաշինքի տեսության ստեղծման հետ:

ա. Ջոն Լոք

բ. Դեյվիդ Հյում

գ. Թոմաս Հոբս

դ. Ժան-ժակ Ռուսո

3. Հակամարտության մասնակից կողմերի շահերի և դիրքորոշումների վերաբերյալ ո՞ր դատողությունն է ճշմարիտ:

ա. Դիրքորոշումները հակամարտությանը մասնակցող կողմերի հրապարակավ հայտնած պահանջներն են, իսկ շահերը՝ դիրքորոշումների նման, համարվում են կողմերի վերջնական նպատակը

բ. Կողմերի շահերը հակամարտությունն առաջացնող պատճառներն են, իսկ դիրքորոշումները՝ նրանց իրական ցանկությունները

գ. Շահերը հակամարտությանը մասնակցող կողմերի իրական ցանկություններն են, որոնք կանգնած են հայտարարած դիրքորոշումների, այսինքն կողմերի պահանջների, ետևում

դ. Շահերը կողմերը որոշում են հակամարտության ընթացքում, այն դեպքում, երբ դիրքորոշումները սահմանում են նախքան հակամարտության ծագելը

4. Ո՞ր պարզաբանումն է համապատասխանում էկոնոմիկայում *համեմատական առավելության* հայեցակարգին:

ա. Արտադրել որոշակի արտադրանք, մյուս արտադրողների համեմատ ավելի շատ ռեսուրսներ կիրառելով

բ. Արտադրել որոշակի արտադրանք, մյուս արտադրողների համեմատ ավելի քիչ այլընտրանքային ծախսերով

գ. Մյուս արտադրողների համեմատ, որոշակի արտադրանքն ավելի ցածր գնով մատակարարել շուկա

դ. Մյուս արտադրողների համեմատությամբ, ավելի արդյունավետ կերպով բարձրացնել ապրանքի որակը

5. Պատվի ու արժանապատվության մասին դատողություններից ո՞րն է ճշմարիտ:

ա. Պատիվը, անհատի կողմից սեփական հնարավորությունների ամբողջական իրացումն է հասարակության մեջ, իսկ արժանապատվությունը՝ ինքնաիրացման փաստացի հետևանքը

բ. Պատիվը հանրության միատեսակ վերաբերմունքն է անհատի նկատմամբ, իսկ մարդկային արժանապատվությունը անհատը ձեռք է բերում իր քաղաքացիական ակտիվությամբ

գ. Արժանապատվությունը հանրության յուրաքանչյուր անդամի համար օբյեկտիվ տրվածությունն է, իսկ պատիվը՝ անհատի արժեքավորումը հասարակության շրջանում

դ. Արժանապատվությունը անհատի վերաբերմունքն է հասարակության նկատմամբ, իսկ պատիվը՝ հասարակության վերաբերմունքը անհատի նկատմամբ

6. Դիագրամի վրա ներկայացված է կայուն զարգացման բաղադրիչների փոխկապակցությունը: Ի՞նչ է պետք գրել հարցական նշանի փոխարեն:



ա. Նպատակահարմար

բ. Ունիվերսալ

գ. Անսահմանափակ

դ. Ագրարային

7. Ո՞ր պարզաբանում է համապատասխանում պրոտեկցիոնիզմի հասկացությանը տնտեսության մեջ:

ա. Պետության ներքին շուկայում ազատ ներմուծման և արտահանման պահպանում

բ. Միջազգային շուկայում ապրանքի ներմուծման և արտահանման հաշվեկշռի պահպանում

գ. Տեղական արտադրողներին պաշտպանելու նպատակով, պետության ներքին շուկայում ներմուծման սահմանափակում

դ.Արտադրանքի որակը բարելավելու նպատակով միջազգային առևտրի մեջ բաց տնտեսական համագործակցության պահպանում

8. Մտավոր սեփականության և ստեղծագործականության մասին կազմված դատողություններից որը *չի համապատասխանում* Վրաստանի սահմանադրությանը:

ա. Մտավոր սեփականության իրավունքը անկապտելի է և ստեղծագործական գործունեության ոլորտում գրաքննությունն անթույլատրելի

բ. Մտավոր սեփականության տարածումը չի թույլատրվում արգելել, եթե այն տարածելը չի ոտնահարում այլ անձի զգացմունքները

գ. Մտավոր ստեղծագործության ազատությունը ապահովված է և չի թույլատրվում միջամտել ստեղծագործական գործընթացին

դ. Անթույլատրելի է արգելանքի տակ դնել ստեղծագործական երկը, եթե այն տարածելը չի ոտնահարում այլ անձի օրինական իրավունքները

9. Ո՞ր տեսակետն է ճիշտ արտահայտում հայրապետական հասարակության մասին ֆեմինիստական հայացքը:

ա. Հայրապետական հասարակության հիմքում ընկած է սխալ հայացքների մի ամբողջ շարք, որոնց աղբյուրն են հանդիսանում հենց իրենք՝ կանայք

բ. Հայրապետական հասարակության առկայությունը չի արդարացվում, քանի որ այն հիմնվում է գենդերային դերերի մասին սխալ պատկերացման վրա

գ., Հայրապետական հասարակության առկայությունը արդարացվում է, եթե այն արտացոլում է այն մշակութային տրվածությունը, որտեղ գոյություն ունի սոցիում

դ. Հայրապետական հասարակությունը ձևավորվում էր հազարավոր տարիների ընթացքում և հասարակության մեջ առկա գենդերային դերերը արդար են բաշխված

10. Ո՞րն է միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական խնդիրը:

ա. Զինված հակամարտությանը մասնակցող պետությունների միջև արդարացիության վերականգնման ապահովումը

բ. Քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, որոնց իրավունքները խախտվում են միայն միջազգային բնույթի զինված հակամարտությունների դեպքում

գ. Զինված հակամարտությանը մասնակից կողմերի միջև ռազմական գործողությունների կանոնների ու մեթոդների կարգավորումը, անկախ նրանից կրում է, թե ոչ հակամարտությունը միջազգային բնույթ

դ. Պետությունների միջև զինված հակամարտությունները տեղայնացնելու սատարումը

11. Ո՞ր դատողությունն է ճիշտ արտահայտում լիբերալ – դեմոկրատական համակարգերում պոզիտիվ և նեգատիվ իրավունքների բովանդակությունը:

ա. Նեգատիվ իրավունքները այն պարտավորություններն են, որոնք բարդված են յուրաքանչյուր անհատի վրա պետության նկատմամբ, իսկ պոզիտիվ իրավունքները այդ պարտավորություններից ազատվելու հիմքն են հանդիսանում

բ. Պոզիտիվ իրավունքները անհատի ազատության այն տարածքն են ներկայացնում, ուր նա պաշտպանված է իշխանության միջամտելուց, իսկ նեգատիվ իրավունքները բարձրացնում են իշխանության դերը անհատական ազատության մեջ

գ. Պոզիտիվ իրավունքները նպաստում են անհատի ազատության աճմանն ու զարգացմանը օրենքով նախատեսված շրջանակներում, իսկ նեգատիվ իրավունքները պետությանը տալիս են իրավունք միջամտելու և երբեմն նաև խստորեն սահմանափակելու անհատի ազատությունը

դ. Նեգատիվ իրավունքները սահմանում են անհատի ազատության տարածքը, ուր պետությունը չունի միջամտելու իրավունք, իսկ պոզիտիվ իրավունքները պետությունից օգնություն կամ ռեսուրսներ պահանջելու իրավունքն է

12. Դիագրամն արտացոլում է երիտասարդների շրջանում որոշումների կայացման գործընթացի վրա տարբեր ակտորների ներգործությունը Վրաստանում (Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամ, 2016թ.)



Ո՞ր դատողությունը *չի համապատասխանում* դիագրամի տվյալներին:

ա. Առհասարակ, երիտասարդների շրջանում որոշում կայացնելու գործընթացի վրա մոր ներգործությունը այլ անձանց ներգործությունից ավելի բարձր է

բ. Ծնողների ներգործությունը իգական սեռի երիտասարդների վրա ավելի բարձր է, քան արական սեռի երիտասարդների վրա

գ. Ամուսնու ներգործությունը իգական սեռի երիտասարդների վրա ավելի բարձր է, քան արական սեռի երիտասարդների վրա

դ. Արական սեռի երիտասարդները որոշում կայացնելիս ավելի անկախ են, քան իգական սեռի երիտասարդները

13. Առաջադրանքում ներկայացված են Արդարադատության նախարարության հանցագործությունների կանխարգելման կենտրոնի քրեական պատասխանատվությունից զերծ պահելու և հաշտարարության (մեդիացիա) ծրագրի արդյունքները.

- 2010-2017թթ ժամանակահատվածում Վրաստանում քրեական պատասխանատվությունից զերծ պահելու ծրագրին են ներգրավվել 2300-ից ավելի 21 տարին չբոլորած անչափահասներ, որոնց համար կատարած հանցագործությունն առաջինն էր:
- Քրեական պատասխանատվությունից զերծ պահելու ժամկետը լրանալուց հետո 3 տարվա ընթացքում կրկին անգամ հանցանք է գործել երիտասարդների (որոնց զերծ են պահել քրեական պատասխանատվությունից) միայն 9%-ը:
- Միջազգային չափանիշի համաձայն 20%-ից պակաս ռեցիդիվը լավ ցուցանիշ է համարվում

Տվյալների հիման վրա կայացրած ո՞ր եզրակացությունն է ճշմարիտ:

ա. 2010-2017 թվականներին աճել են քրեական հետապնդման, անչափահասներին ձերբակալելու, նրանց նկատմամբ կալանավորում և ազատազրկում կիրառելու դեպքերը

բ. Քրեական պատասխանատվությունից զերծ պահելու ցուցանիշի աճմանը զուգահեռ, աճում է նաև զերծ պահած անչափահասների կողմից կրկին անգամ հանցանք գործելու ցուցանիշը

գ. Վերականգնողական արդարադատությունը անչափահասներին իրատեսորեն դրդում է դեպի հանցագործություն, քանի որ նրանք չունեն քրեական հետապնդման և ազատազրկման վախ և անարձագանք է թողնում հանցագործության փաստը

դ. Վերականգնողական արդարադատությունը չի բարձրացնում կրկնվող հանցագործության ցուցանիշը, միաժամանակ անչափահասներին կյանքն առանց դատվածության ու պատժակրման շարունակելու հնարավորություն է ընձեռում

14. (1) Սխեմայի վրա ներկայացված երկրները դասավորեք հաջորդական կերպով՝ միապետականից հանրապետական կառավարման ձևին անցնելու ժամկետի համաձայն.

	3*		

* աղյուսակում նշված է ճիշտ պատասխանը

15. (1) II սյունակում ներկայացված են քաղաքական տեսություններ, իսկ I սյունակում՝ թե ի՞նչ դեր է հատկացված հասարակությանը այս տեսությունների համաձայն: Սահմանեք համապատասխանությունները:

I. Հասարակության դերը	II. Քաղաքական տեսություններ
ա. Ցանկացած իշխանություն կասկածի տակ առնել	1.Պացիֆիզմ 2. Անարխիզմ 3. Սոցիալիզմ 4. Կապիտալիզմ 5. Իմպերիալիզմ
բ. Ազատ շուկայի աջակցում/օժանդակում	
գ. Ոչ իրավական օրենքների և գործողությունների խաղաղ բողոքարկում	
դ. Ռազմական և աշխատանքային ծառայության ապահովում	
ե. Ընդհանուր կապիտալի և արտադրության միջոցների ստեղծում	

16. **(2) II սյունակում ներկայացված քաղաքական մտածողներին համապատասխանեցրեք I սյունակում տրված նրանց կողմից արտահայտած կարծիքները ժողովրդավարական կառավարման մասին.**

I. Ժողովրդավարական կառավարման մասին արտահայտած կարծիքները	II. Քաղաքական մտածողներ
ա.Կհիմնվի դեմոկրատական սահմանադրություն, որի շնորհիվ կհաստատվի պրոլետարիատի ուղղակի կամ անուղղակի կառավարում:	1. Արիստոտել 2. Ալեքսիս դը Տոկվիլ 3. Մարտին Լյութեր Քինգ 4. Ֆրիդրիխ Էնգելս 5. Մահաթմա Գանդի
բ. Ժողովրդավարական համակարգում ամենաթույլը պետք է ունենա այն նույն հնարավորությունները, որն ունի ամենաուժեղը:	
գ. Ժողովրդավարությունն ու սոցիալիզմը չունեն ոչ մի ընդհանուր բան, բացառությամբ հավասարություն բառի: Սակայն տեսեք, թե որն է տարբերությունը. ժողովրդավարությունը ձգտում է դեպի հավասարություն ազատության մեջ, սոցիալիզմը՝ դեպի հավասարություն սահմանափակման և ստրկության մեջ:	
դ. Արիստոկրատիան այնպիսի պետություն է, որտեղ, առաջին հերթին, հարգում են բարոյական մարդկանց և այնտեղ չափանիշ է համարվում բարոյականությունը, օլիգարխիայում՝ հարստությունը, դեմոկրատիայում՝ ազատությունը:	
ե. Եկել է ժամանակը, որ կատարենք ժողովրդավարության իրական խոստումները: Եկել է ժամանակը, որ ազատվենք սեգրեգացիայի մութ ու ավեր հովտից և բռնենք ռասսայական արդարության լուսավոր ուղին: Եկել է ժամանակը, որ դուրս բերենք մեր ազգը ռասայական անարդարության սորուն ավազներից և հիմնադրենք այն եղբայրության միասնական ժայռի վրա:	

17. (1) Քարտեզն արտացոլում է աշխարհի երկրներում համացանցի օգտատերերի տոկոսային թվաքանակը: II սյունակում տրված քարտեզի լեգենդի գույներին համապատասխանեցրեք I սյունակում տրված համացանցի օգտատերերի ցուցանիշը.



I. Համացանցի օգտատերերի ցուցանիշը	II.Քարտեզի լեգենդի գույնը
ա. Շատ բարձր	1.
բ. Բարձր	2.
գ. Միջին	3.
դ. Շատ ցածր	4.

18. (7) **Ուշադիր ընթերցեք տեքստը, գտեք և ուղղեք սխալները.**

Հասարակությունն ու մշակութային տարբերակվածությունը

Մշակույթը, ժամանակակից իմաստով, կարող է ներառել ընդհանուր լեզու, կրոն, ծես-սովորույթներ և մտածողության սխեմաներ: Հանրությանը բնորոշ է մշակույթների բազմազանությունը, քանի որ դրանում միավորված են տարբերվող մարդիկ և սոցիալական խմբեր: Այդ տարբերակվածությունը պահպանելու և զարգացնելու համար գոյություն ունի մոտեցում, որը կոչվում է աշխարհականություն (սեկուլյարիզմ):

Գոյություն ունի մշակութային բազմազանության կառավարման երեք հիմնական ձև. 1) Մարդկանց խմբերը վանել, մեկուսացնել, որևէ խտրական միջոցներով նրանց կտրականապես տարանջատել հասարակության մյուս խմբերից, կոչվում է ունիֆիկացիա: 2) Ասոցիացիա ենթադրում է տարբերվող մշակույթներին բնորոշ առանձնահատկությունների բնաջնջում: 3) Համագոյակցության մոդելը ենթադրում է, ինչպես պահպանել սեփական մշակույթը, այնպես էլ ամբողջովին ընդունել մյուսների մշակույթը ու ընդհանուր շահերի հիման վրա համագործակցել տարբերվող խմբերի հետ:

Անցնել տեքստի երկրորդ էջին

Մարդկության պատմության ընթացքում բազմիցս եղել են դեպքեր, երբ մի հասարակության ներսում դոմինանտ խումբը ճնշում էր էթնիկ փոքրամասնություններին: Դրա վառ օրինակն է Նացիստական Գերմանիայի կողմից սեփական, ինչպես նաև այլ երկրների հրեա քաղաքացիների էթնիկական զտումը: Այս կոնկրետ պատմական երևույթը հայտնի է Ապարտհեյդ անունով և այն համարվում է մարդկության նկատմամբ իրականացրած ամենադաժան հանցագործություններից մեկը:

Վրաստանում նույնպես առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում տարբերվող էթնիկ խմբերի համակեցությանը, քանի որ Վրաստանը մոնոէթնիկական հասարակություն է: Հենց դրան էլ ծառայում է Վրաստանի սահմանադրությունը ևս:

Սահմանադրությունը սակրալ ակտ է, որն ընդունում է բոլոր քաղաքացիների հավասարությունը, որպեսզի մասնակցություն ցուցաբերեն սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական կյանքին, անկախ նրանց ազգային, էթնիկ, կրոնական թե լեզվական պատկանելությունից:

Աշխարհի մշակույթների բազմազանության պահպանումը ՄԱԿ-ի մասնագիտացված կազմակերպության՝ ԵԱՀԿ-ի պարտականություններից մեկն է: Այս կազմակերպությունը ձգտում է պաշտպանել տարբեր մշակութային ձեռքբերումները և հանրահայտ դարձնել դրանք աշխարհի մասշտաբով:

Վերադառնալ տեքստի առաջին էջին

19. (6) Առաջադրանքում տրված է աշակերտի կողմից «Իրավունք» թեմայով գրված երկու տեքստ: Տեքստերը հնարավոր է պարունակեն փաստացի սխալներ: Ծանոթացեք տեքստերին, վերլուծեք դրանց բովանդակությունը և գնահատեք դրանք առաջարկած չափորոշիչներով:

<u>I տեքստ.</u>

Ցանկացած մշակույթի մեջ գոյություն ունեն որոշակի հիմնական կանոններ, որոնց հետևելը պահպանում է կարգուկանոնը հասարակության շրջանում: Այդ կանոնների միասնությունը կոչվում է իրավունք: Այդ կանոնները հրապարակում է սահմանադրական մարմինը և դրանք կոչվում են օրենքներ:

Բացի խորհրդարանից կանոններ կարող է սահմանել պետական մարմինը, կամ այս կամ այն պաշտոնատար անձը՝ հրամանի տեսքով: Նման հրաման արտացոլող փաստաթուղթը կոչվում է իրավական ակտ և այն կարող է լինել երկու տեսակի՝ նորմատիվ և ոչ նորմատիվ: Իրավական ակտը նորմատիվ է այն դեպքում, եթե վերաբերում է մեկ շատ կոնկրետ դեպքի և հատկացված չէ բազմակի կիրառման համար:

Նորմերն, իրենց հերթին, բաժանվում են տարբեր խմբերի, նրա համաձայն, թե ինչ են կարգավորում դրանք և այդ խմբերը կոչվում են իրավունքի ճյուղեր: Օրինակ, վարչական իրավունքը կարգավորում է պետական մարմինների գործունեությունը և հասարակական կարգի խախտումների մի մասը, քրեական իրավունքը վերաբերում է տարբեր անձանց կամ կազմակերպությունների դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործություններին, մունիցիպալային իրավունքը՝ մարդկանց միջև գույքային կամ ընտանեկան հարցերին:

Տարբեր օրենքների կամ հրամանների խախտման հարցերը քննում են տարբեր տեսակի դատարանները: Օրինակ, քաղաքացիական, վարչական և քրեական իրավունքի հարցերը քննում է ընդհանուր դատարանների համակարգը, որը կազմված է քաղաքային, վճռաբեկ և սահմանադրական դատարաններից:

<u>Անցնել II տեքստին</u> *<u>Անցնել գնահատման սխեմային</u>*

II տեքստ.

Մարդկային բնույթն այնպիսին է, որ հաճախ կոնֆլիկտների մեջ է ընկնում այլ մարդկանց հետ: Այդ կոնֆլիկտներից խուսափելու համար մշակվել են տարբեր կանոններ, որոնց անհրաժեշտ է հետևել: Այդ կանոնները սահմանում է ժողովրդի կողմից ընտրված խորհրդարանը, թեև ոչ միայն: Տարբեր պետական կառուցվածքները կամ պաշտոնյաները կարող են սահմանել տարբեր կանոններ, այսպես կոչված իրավական ակտերի միջոցով: Եթե նման հրամանը նախատեսված է բազմակի անգամ կիրառելու համար, այն կոչվում է ոչ նորմատիվ իրավական ակտ:

Օրենքի կամ իրավական ակտերի խախտման դեպքում գործին ներգրավվում է դատական համակարգը: Դատական համակարգը նույնպես բազմազան է: Օրինակ, գոյություն ունի ընդհանուր դատական համակարգ, որն իր մեջ միավորում է շրջանային, վճռաբեկ և սահմանադրական դատարանները: Դրա շնորհիվ քաղաքացիները այլ քաղաքացիների հետ կարող են լուծել տարբեր տեսակի վեճեր:

Թեև, ոչ բոլոր դատարաններ են քննում ցանկացած հարցեր: Կան նաև տարբեր տեսակի հանցագործություններ, որոնց որակավորումը տեղի է ունենում դրանց ծանրության կամ այլ հատկորոշումների համաձայն: Օրինակ, գոյություն ունի սահմանադրական իրավունք, որը քննում է իրավունքի բոլոր ճյուղերի ընդհանուր, կարևորագիույն հարցերը: Ընտանեկան, ժառանգական կամ պայմանագրային հարցերին վերաբերում է քաղաքացիական իրավունքը, իսկ էկոլոգիական իրավունքը կարգավորում է տարբեր պետական մարմինների կամ հաստատությունների գործունեությունը:

Վերադառնալ I տեքստին *Անցնել գնահատման սխեմային*

Ծանոթացեք գնահատման սխեմային և երկու տեքստն էլ գնահատեք տրված չափորոշիչների համաձայն: Գրեք համապատասխան միավորը գնահատման սխեմայի յուրաքանչյուր չափորոշիչի համար առանձին-առանձին.

	I. Չափորոշիչներ	II.Առավելագույն միավոր	III. Միավորներ շնորհելու սկզբունքը
A.	**Իրավական ակտերի որակավորում**	2	Յուրաքանչյուր ճիշտ անվանած և պարզաբանած իրավական ակտի կատեգորիա՝ 1 միավոր
B.	**Իրավունքի ճյուղեր**	5	Յուրաքանչյուր ճիշտ անվանած իրավունքի ճյուղը և դրա կարգավորման ոլորտը՝ 1 միավոր
C.	**Ընդհանուր դատարանների համակարգը**	3	Յուրաքանչյուր ճիշտ անվանած ընդհանուր դատարանների համակարգում մտնող օղակ՝ 1 միավոր

Ձեր կողմից շնորհված միավորները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում.

		A	B	C
19.1	I տեքստի գնահատում			
19.2	II տեքստի գնահատում			

Վերադառնալ I տեքստին *Վերադառնալ II տեքստին*

20. (4) Սխեման ոչ լիարժեք կերպով արտացոլում է ընտրական համակարգերը, դրանց աշխատանքի հիմնական սկզբունքները և դրանց դրական կողմերը: Լրացրեք սխեմայի դատարկ վանդակները.

Ընտրական համակարգ	Ընտրության սկզբունք	Դրական կողմը
20.1	Պատգամավորի մանդատ են վերցնում միայն այն թեկնածուները, որոնք ստացել են օրենքով նախատեսված ձայների մեծամասնությունը	20.2
Հանրամասնական համակարգ	20.3	20.4

21. (3) Տրված է առանց լեգենդի և վերնագրի քարտեզ: Քարտեզի վերլուծության հիման վրա պատասխանեք հարցերին.



21.1 Ի՞նչ է արտացոլված տրված քարտեզի վրա:

ա. Միջազգային կազմակերպությունները

բ. Կառավարման ձևերը

գ. Մամուլի ազատության որակը

դ. Համախառն ներքին արդյունքի ծավալը

21.2 Քարտեզի վրա ի՞նչն է նշված մանուշակագույնով:

21.3 Քարտեզի տվյալների հիման վրա վերլուծեք հետխորհրդային երկրներում գոյություն ունեցող իրավիճակը: Դատողություններ արեք այդ իրավիճակն առաջացնող պատճառների շուրջ:

22. (5) Առաջադրանքում տրված է դպրոցական նախագծի նպատակի, խնդիրների և իրականացման ուղիների ոչ լիարժեք տարբերակը: Դպրոցական նախագծի տրված հատվածին ավարտված տեսք տալու համար առաջադրանքները կատարեք հետևյալ հաջորդականությամբ.

I. Որոշեք և գրառեք I խնդիրը, ելնելով աղյուսակում տրված իրականացման ուղիների թվարկացանկից (Առաջադրանք 22.2)

II. Գրեք իրականացման երեք տարբեր ուղի, որոնք Ձեր կարծիքով, նպաստում են աղյուսակում տրված II խնդրի կատարմանը (Առաջադրանք 22.3)

III. Որոշեք և գրառեք նախագծի նպատակը, որին հասնել հնարավոր է նախագծի երկու խնդրի և դրանց իրականացման ուղիներից ելնելով: (Առաջադրանք 22.1)

22.1	**Նախագծի նպատակը.** *(Գրեք նպատակը, որին հնարավոր է հասնել տրված խնդիրներից և իրականացման ուղիներից ելնելով)*
22.2	**Նախագծի I խնդիրը.** *(Սահմանեք և գրեք կոնկրետ խնդիր ելնելով I խնդրի իրականացման ուղիներից)* **Նախագծի II խնդիրը.** **Վրաստան-Եվրամիություն փոխհարաբերության քաղաքական-մշակութային շահի իմաստավորումը**
22.3	**<u>I խնդրի իրականացման ուղիները.</u>** 1. Դպրոցական համայնքի համար Եվրամիության պատմության վերաբերյալ դասախոսության կազմակերպում 2. Դպրոցական կոնֆերանս «Եվրամիության քաղաքականություն» թեմայով 3. Եվրոխորհրդարանի մոդելավորված նիստի անցկացում բարձր դասարանների աշակերտների մասնակցությամբ **<u>II խնդրի իրականացման ուղիները. (Գրեք տրված խնդրի իրականացման երեք տարբեր ուղի)</u>** 1. 2. 3.

23. (4) Ծանոթացեք նկարին և պատասխանեք հարցերին



23.1 Ի՞նչ են մարմնավորում նկարի վրա պատկերված հորի եզրին և հորի մեջ գտնվող մարդիկ:

23.2 Ո՞ր երկու քաղաքական գաղափարախոսությունն է արտացոլում նկարը:

23.3 Փաստարկված դատողություններն արեք նկարի վրա արտացոլված գաղափարախոսությունների թույլ կողմերի վերաբերյալ:

24. **(5) Ծանոթացեք տեքստին և կատարեք առաջադրանքը ստորև ներկայացված հղումների համաձայն.**

«Եթե ավելի խորն ուսումնասիրենք, ապա կտեսնենք, որ մեծագույն պահպանողականությունը մեկ անգամ փորձածը պահպանելու գործում, այն ապարատի կարևորագույն կենսական հատկությունն է, որի վրա մշակույթի զարգացման գործում ընկած է այն նույն պարտականությունը, ինչ կատարում է գենետիկական կառուցվածքը տեսակների փոփոխության ընթացքում: Շատ ավելի կարևոր է պահպանել, քան ձեռք բերել նորը, այնպես որ, առանց հատուկ վերլուծության չենք իմանա, թե մեր մշակույթի ավանդությամբ փոխանցված ո՞ր ծեսը կամ սովորույթն է հնացել, ո՞րը կարող ենք սպառել և ո՞րը թողնել որպես մշակույթի ձեռքբերում»:

«Քաղաքակիրթ մարդկության ութ մահասփյուռ մեղքերը» Կոնրադ Լորենց, 1903-1989

24.1 Ելնելով տեքստից որոշեք և անվանեք բանավեճի թեման: Դատողություններ արեք տվյալ տեքստի հետ Ձեր ընտրած բանավեճի թեմայի համապատասխանության և ակտուալության մասին:

24.2 A. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ժամանակ առաջացած դիրքորոշումը պաշտպանելու համար:

B. Անվանեք երկու փաստարկ բանավեճի ժամանակ առաջացած դիրքորոշումը հերքելու համար:

(Յուրաքանչյուր փաստարկ պետք է կրի էականորեն անկախ միտք)

25. (8) Վերլուծեք տրված աղբյուրները և պատասխանեք հարցերին.

Աղբյուր N1

« Ընդհանուր ենթադրության առկայության հիման վրա կարող ենք առանձնացնել ազգային ինքնության հիմնական հատկանիշները.

1. Պատմական տարածք՝ հայրենիք
2. Ընդհանուր առասպելներ և պատմական հիշողություն
3. Ընդհանուր հասարակական զանգվածային մշակույթ
4. Բոլոր անդամների համար ընդհանուր իրավական իրավունք-պարտականություններ
5. Ընդհանուր տնտեսություն իր անդամների համար տարածքային շարժունակության ապահովմամբ»:

«Ազգային ինքնություն», Էնթոն Սմիթ, 1939-2016

Անցնել աղբյուրներին. *2;* *3;* *4*

Անցնել առաջադրանքներին. *25.1;* *25.2;* *25.3;* *25.4 - 25.7*

Աղբյուր N2

«Տարածքային ազգայնականություն». Ազգի հասկացությունը հիմնականում քաղաքացիական և տարածքային բնույթ է կրում: Նրանք հաճախ ձգտում են միավորել տարբերվող էթնիկական պոպուլյացիաները և ինտեգրել նրանց նոր քաղաքական միավորման մեջ, հին գաղութային պետությունից նոր «տարածքային» ազգ ստեղծելու նպատակով:

Էթնիկ ազգայնականություն. Ազգի հասկացությունը հիմնականում էթնիկ և ծագումնաբանական է: Նրանք ձգտում են առանձնանալ ավելի խոշոր քաղաքական միավորումից և հիմնել նոր քաղաքական «էթնո-ազգ»:

«Ազգային ինքնություն», Էնթոն Սմիթ, 1939-2016

Անցնել աղբյուրներին . 1; 3; 4

Անցնել առաջադրանքներին . 25.1; 25.2; 25.3; 25.4 - 25.7

Աղբյուր N3

- Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը իր սահմանների ներքո հավասարապես ապահովում է բոլոր քաղաքացիների քաղաքացիական և քաղաքական իրավունքները անկախ ազգությունից, կրոնից, սոցիալական վիճակից և սեռից:
- Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը զարգացման ազատ ասպարեզ է բացում իր տարածքում բնակվող բոլոր ազգերի համար:
- Նախքան Հիմնադիր ժողով գումարելը ամբողջ Վրաստանը կառավարել-վարելու գործն իրականացնում է Ազգային Խորհուրդը, որը համալրված պետք է լինի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով, և ժամանակավոր կառավարությունը, որը պատասխանատու է Խորհրդի առջև:

Վրաստանի անկախության ակտ, 1918

Անցնել աղբյուրներին. *1*; *2*; *4*

Անցնել առաջադրանքներին. *25.1*; *25.2*; *25.3*; *25.4 - 25.7*

Աղբյուր N4

«Ոմանք կարծում են, որ իսկական հայրենասիրությունը հակասում է կոսմոպոլիտիզմին (աշխարհաքաղաքացիությանը), սակայն դա սխալ է: Յուրաքանչյուր իսկական հայրենասեր կոսմոպոլիտ է, այնպես, ինչպես և յուրաքանչյուր բանական կոսմոպոլիտ (և ոչ՝ մերոնցից) հայրենասեր է: Ինչպե՞ս: Այսպես՝ այն անձը, որը խոհեմորեն ծառայում է իր ազգին և փորձում է բարձրացնել իր հայրենիքը մտավորապես, նյութապես և բարոյապես, դրանով ողջ մարդկության համար պատրաստում է լավագույն անդամներ, լավագույն բարեկամ, նպաստում ողջ մարդության զարգացմանը, բարեկեցությանը: Եթե ամբողջ ազգի զարգացման համար հարկավոր է դաստարակել մասնավոր անձանց, ապա անհրաժեշտ է դաստիարակել նաև առանձին ազգերին, որպեսզի մարդկությունը դառնա զարգացած խումբ, եթե մասնավոր անձանց համար օգտավետ է ազգային, անհատական դաստիարակությունը, ապա նման դաստիարակությունը օգտավետ է նաև ողջ ազգի համար, որպեսզի ողջ ազգը դրսևորի ավելի մեծ ուժ, էներգիա, յուրօրինակություն և մարդկության դրամարկղ ներդնի սեփական գումարը...

Հայրենասիրությունը ավելի շատ զգացմունքի հարց է, քան խելամտության, թեև ողջամտությունը մշտապես եղել է ու կա նրա երկրպագուն ու մեծարողը: Կոսմոպոլիտիզմը միայն խելքի արգասիքն է, մարդու ողջամտության, այն ոչ մի կապ չունի մարդու սրտի հետ, դա միջոց է այն չարիքը կանխելու համար, որն առ այսօր հետապնդում է ողջ մարդկությանը»:

Վաժա-Փշավելա, Կոսմոպոլիտիզմ և հայրենասիրություն, 1905 թ.

Վերադառնալ աղբյուրներին. 1; 2; 3 *Անցնել առաջադրանքներին.* 25.1; 25.2; 25.3; 25.4 - 25.7

25.1 Ըստ Վաժա-Փշավելայի տեքստի՝

ա. Եթե անձը չի ծառայում իր հայրենիքին, ապա նա չի համարվում իր ազգի ճշմարիտ անդամ

բ. Մարդու բարոյական զարգացումը կախված է նրանից, թե ինչպես է նա վարվում այլ ազգի ներկայացուցիչների հետ

գ. Ազգի դաստիարակության անհրաժեշտությունը նույնքան կարևոր է, որքան անհատի: Առանց դրա ազգը չի կարողանա արմատանալ միջազգային ասպարեզում և անպայման կփորձի դրսևորել իր առավելությունը մյուսների նկատմամբ

դ. Մարդը միաժամանակ և՛ իր ազգի, և՛ ողջ մարդկության ներկայացուցիչն է: Այսպիսով, հայրենասիրությունն ու կոսմոպոլիտիզմը համաձայնության մեջ են միմյանց հետ, եթե անձի կողմից ընկալվում են ադեկվատ կերպով

Վերադառնալ աղբյուրներին. 1; 2; 3; 4 *Անցնել առաջադրանքներին.* 25.2; 25.3; 25.4 -25.7

25.2 Ըստ Էնթոնի Սմիթի տեքստի՝

ա. Ազգայնականությունը պետության զարգացման և առաջընթացի համար կարևորագույն երևույթ է

բ. Տարածքային ազգայնականությունը հակազաղութային երևույթ է և ենթադրում է մեկ էթնիկ խմբի անդամների միավորում

գ. Էթնիկ ազգայնականությունը անտեսում է քաղաքացիների ծագումը և հաշվի է առնում միայն նրանց կրոնական պատկանելությունը

դ. Տարածքային ազգայնականությունը խմբավորում է քաղաքացիներին ըստ իրենց բնակության տարածքի և միավորում նրանց մեկ ազգի մեջ

Վերադառնալ աղբյուրներին. 1; 2; 3; 4 *Անցնել առաջադրանքներին.* 25.1; 25.3; 25.4 -25.7

25.3 Աղբյուրների հիման վրա արված ո՞ր եզրահանգումն է ճիշտ:

ա. Մարդկանց խումբը կարող է կոչվել ազգ, եթե նրան բնորոշ է Էնթոնի Սմիթի կողմից նկարագրած հատկանիշներից առնվազն երեքը

բ. Վաժա-Փշավելան չի կարող համարվել ազգայնական, քանի որ նա կոսմոպոլիտիզմ է քարոզում

գ. Վրաստանի անկախության ակտը համահունչ է տարածքային ազգայնականության բովանդակությանը

դ. Էնթոնի Սմիթի ազգերի հետ կապված տեսակետը կարող է նկարագրել միայն Ամերիկայի Միացյալ Նահանգները և ոչ մի դեպքում չի կարող կիրառվել բազմադարյա Վրաստանը նկարագրելիս

Վերադառնալ աղբյուրներին. *1*; *2*; *3*; *4*

Անցնել առաջադրանքներին. *25.1*; *25.2*; *25.4 -25.7*

25.4 N4 աղբյուրի համաձայն դատողություններ արեք, ի՞նչ է նկատառվում «մերոնցից», «անխոհեմ» հասկացության մեջ:

25.5 Վաժա-Փշավելայի կարծիքով կոսմոպոլիտիզմը «միջոց է այն չարիքը կանխելու համար, որն առ այսօր հետապնդում է ողջ մարդկությանը»: Ո՞ր չարիքը նկատի ունի հեղինակը:

25.6 N3 աղբյուրի համաձայն դատողություններ արեք այն սոցիոքաղաքական համատեքստի շուրջ, որը պայմանավորել է Վրաստանի անկախության ակտում նշված կետերի արձանագրումը:

25.7 Դատողություններ արեք քաղաքացիական հասարակության գործունեության շուրջ ժամանակակից Վրաստանում և նրանց դերի մասին ազգային ինքնության ձևավորման գործընթացում: Դատողությունը հիմնավորեք կիրառելով աղբյուր N1-ը :

Վերադառնալ աղբյուրներին. *1*; *2*; *3*; *4* *Անցնել առաջադրանքներին.* *25.1*; *25.2*; *25.3*